

վարիչ. ես կազմակերպեցի երաժշտական սեկցիան և երկու տարի վարեցի նոյն պաշտոնը:

1923 թ.ին Ալեքսանդրապոլի որբախնամ Ամերիկեան կոմիտեն հրաւիրեց ինձ դիրէկտորի պաշտոնով, որպէս զի կազմակերպեմ կոյր որբերի համար մի ուսումնարան: Այդ դպրոցը բարգաւաճեց թէ՛ ուսման, թէ՛ ձեռարկեստի և թէ՛ մասնաւանդ երաժշտութեան մէջ: Ներկայում ես վարում եմ այդ ուսումնարանի երաժշտական մասը:

1921 թ.ին ժողովրդական կոմիսարների խորհրդի ղեկընտով ես, որպէս « վաստակաւոր զործիչ », նշանակեցի պետական թոշակառու:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ ԵՒ ՅՈՒԹԵԼԵԱՆՆԵՐ

ՀԱՆԴԷՍՆԵՐ հանդէսներու կը յաջորդեն. յորելեան տարիներու մէջ կ'ապրինք: Եկեղեցի, Պետութիւն ելեւել մ'ըրին իտալիոյ մէջ Ս. Տարւոյն առթիւ, ու դեռ կը շարունակեն՝ քանի որ նոր յորելեաններու զոներ կը բացուին:

Մեծ ու խոնարհ Ասիգացիին մահուան 700 ամեակն է, անոր՝ որ ամբողջ Եւրոպայի եղկ ու մեղկ բարքերը նորոգեց. ու գեղեցիկ և ներդաշնակ գործակցութեամբ փառքի դափնիներով կը պնեն այդ գեւրագոյն խոնարհն ու աղքատը: Հանդէսներ այնքան շքեղ և յաղթական որքան վեհ և հզօր և արդիւնաբեր է խաչի և սուրի յաղթանակը միանգամայն, կրօնքի և հայրենիքի գիրկընդխառն սիրտատարփ գուգախառնումը:

Սակայն տարարախտ Հայութիւնն ալ « ի սփռուս ազգաց » օտարութեան մէջ անգամ գիտէ մեղմել իր ցաւերը, սփոփել իր պանդխտութիւնը. և ահա հանդէսներ, յորելեաններ որ կը շարունակուին. և այս մեծապէս միախառնական է, քանի որ կեանք, զարգացում, գործակցութիւն,

մտաւորականներու հանճարին և գործին գնահատումն է. վերջապէս քաջալեր և պատիւ՝ անոնց որ արժանիքն ունին, և դաստիարակութեան կարևոր դաս մը ապագայ սերունդներուն՝ հանճարներու կամ մեծերու դպրոցին մէջ:

Ամբողջ ազգութեան և անոր ծոցին մէջ Մխիթարեան Միաբանութիւնն ալ իր տարեգործեանց մէջ կ'անցընէ այս տարի սրբազան յորելեաններ նուիրական հանդէսներու յաւերժական յիշատակներով:

Ա. ՄԻԻԹԱՐ ԱՐԲԱՆՈՐ ՄԱՀՈՒԱՆ 1774 ՏԱՐԵԻՄԱՐԸ:

Յորելեանի հանդէսները բացաւ Ապրիլ 27ի յիշատակը, տարեդարձ Մխիթարայ երջանիկ փոխման:

Այդ օրը, այդ թուականը խորհրդաւորութիւն մ'ունի իր մէջ տխուր և ուրախ միանգամայն:

Տխրութիւնը հետեանքն է բաժանման, և այնքան խոր՝ որքան ազդեցիկ է յետին հրաժեշտը. ահա այդպիսի է Մխիթարայ բաժանումն ալ, մեր տխրութիւնն ալ:

1. Նիկ. Տեղաբնակն ու Ա. Սպիտակաբն երաժշտութեան ասպարէզում 19-րդ դարի վերջին շրջանի ներկայացուցիչներն են, բայց որովհետև նրանց լուծած են խորհրդային Հայաստանի երաժշտական կուստեւական կենտրոն, աստի տեղադրումում ենք նրանց մասին ևս:

ու այդ օրը, տարիներու և դարերու հոլովումին հետ Մխիթարայ ամէն սերունդներուն ալ կ'ազդէ փոքր կ'շատէ այն ցարդ զոր զգացքի են անոր ձեռնասուն բարեպաշտ պաւակները իրենց մեծ ու պաշտելի հօր մահուան օրը:

Սակայն այդ տխուրութեան կը խառնուի անպատում ուրախութեան մը լիութիւնը, երբ համախումբ խոնարհած Մխիթարայ առջև սիրոյ և յարգանքի պաշտամունքով կը նկատեն զանի իր փառքի պատուանդանին վրայ: Այլևս թաղմանական հանդէս մը չէ մեծ օրուան ակումբը, և ոչ դամբանական մը որ սովոր է արտասանել սրբազան պարտականութեան մը խորին զգացումով ամէն Մխիթարեան նորնձիւզ հայր. այլ գեղոն մ'է անոր հոգւոյն, ներքոյ անոր կեանքին ու գործին:

1749էն ի վեր 1777 սակացմի է որ կը կրկնուի այդ ակումբը. անպայման միշտ սիրոյ պապակով մ'է որ հոն կ'ամփոփուին ամէն հին ու նոր, ծեր և երիտասարդ, ու երբ բնամասցին բարձրաթոյն խոյանքով կը գծուի Մխիթարայ կեանքի ծովը փոթորկալից, վիշտ ու ալիք, լեռ ու անդունդ որ անոր չքացում կը սպառնան՝ յանկարծ խաւար գիշերի մը ծոցէն կը տեսնուի Աստուածամօր գէմը ճառագայթաբծակ ու աղամանդէ շող մը կը հասնի մինչև Մխիթարայ սիրտն ու հոգին՝ « Եղիցի » և ատիկա նոր ու շքեղ « Այսու յաղթեալ » մ'է, զոր Մխիթար իր դրօշին վրայ կ'արձանագրէ անջինջ. և այդ դրօշին ներքև փոթորկին և ամպեր յաղթական կառքի մը կը վերածուին. հալածանքի փրկիչնախ ալիքներին՝ հրեղէն ձիերը կ'ըլլան անոր երկնայեւ թռչելիքն. ու անի կը վարգէ ծով ու ցամաք մինչև հեռուոր ափեր՝ ուր անդորրութեան մէջ կը հիմնէ իր և իր ազգին փառքին և մեծութեան արժանի տաճար մը, և հոն գետեղելով հայրենի սրբութիւններն ու զանձները կը թռչի՝ երկինք աստուածանալու անմահութեան մէջ:

Այդ վայրկեն, այդ ներքոյգիներն Մխիթարայ որդւոց համար տեսիլ մ'է սիրոյ

և զմայլանքի, արբում մը սիրոյ բաժակի, որ կը նորոգէ, կը վառէ նոյն ոգւով, նոյն սրբազան նպատակով. և այս տարի Հ. Ստեփան Ֆրանսիանէն էր որ օժեց մեր սրտերը իր ոգելից ճառով:

Անդողակի կրնանք նշանակել որ այս ականդական պարզ ու վսեմ հանդէսին քիչ մ'աւելի ժողովրդական նկարագիր տուած էր Մխարանութիւնը վերջին տարիներուս վնաստարնակ հայութեան համար, զորաբար ներքոյգեանին վրայ յաւելլով աշխարհաբար ոտանաւոր և արձակ գրութիւններ արտասանուած վանքի սաներէն, մասնաւորութեամբ Մ. Ռ. վարժարանի աշակերտներուն, որոնք զբաւորէն զատ նուագախումբի մէջ ալ կարեւոր բաժին մը կը ստանձնէին: Այս տարի միայն զանց եղաւ այս յաւելուածը միացնելով զայն մեծագոյն յիշատակի մը հետ, այն է Մխիթար Արքահօր ծննդեան 250ամեակին:

Բ. ԵՐԿՆԱՅԻՒԴԱՐԱՄԵԱԿ ՆՈՐԸՆԵՍԱՅԱՐԱՆԻ.

Մայիս... ու բնութիւն ու սիրտ՝ գեղեցկութիւն, բոյր ու սէր շալալեցին Մխիթարայ պատուանդանը զարդարելու իր փառքի տաճարին մէջ, հոն՝ ուր այդ Մեծը՝ ճրտինք ու սէր թափեց վարդ ու շուշան կ'իթեցնելու:

Մայիս 16ն էր. ամբողջ Մխարանութիւնը Մխիթարայ բուրաստանին մէջ կը տօնախմբէր Երկրորդ Մարդկազարդի նոր հանդէս մը, կրօնական և գիտական:

Ու ամէն սիրտ յատուկ սիրով մը, գործով մը կը յուզուէր երբ հին ու նոր յիշատակներ կ'արթննային երանական ու շնաշխարհիկ վայրին մէջ, որ ընական ըստն ու սրբարանն է Մխիթարայ բոլոր որդիներուն: Սէր, անմեղդութիւն հոն կարծես կց մարմնանան, այն խղիկներուն ու զասարաններուն, զբոսավայրին ու հանդիսարանին, ու ամենէն աւելի՝ տաճարիկին մէջ ուր կուսական երեսներ կը ժպտին սէր ու շնորհ ցօղելու, և ինչ երկնայեւթիւն կոյս իրերուն զմայլանքով՝ բանաւաջ ու սիրտ ամէն արշալոյսին մոգական լճակի ափին և փակել զանոնք քաղցր

քունի՝ Կոյս մօր գրկաց մէջ երանաւէտ երջանկութեան զմայլումով:

Առտու գերագոյն հանդէսները կատարուեցան Ս. Խորհրդարանի պահուստում, հոգևոր ուրախութիւնը ճոխացաւ Ս. Աթոռին ղըրմէ կըլած կրկին արտօնաթղթերով: անոնցմէ մին առաւելեալ ճորտեմով կը հռչակէր Նորընծայարանի մատարան Ս. Սեդակուն, միւսը՝ լիակատար ներողութիւն կը շնորհէր այդ մատուռն ալցելով Մխիթ. Հարց եւ սանուց, երկու շնորհներն ալ ցամա հիկցէ:

Արտարանի հանդէսը երեկոյեան պահուստում էր, բացումը տաճարիկին մէջ եղաւ զօհաբանական երգի եռանդուն նուագովը: երեք ծայնով, ջութակի զգայուն թրութաւններուն ընկերակցութեամբ, Համառոտ արարողութիւնէն վերջ դիմեցինք ստորին դասարանը: հոն էր գլխաւոր հանդիսավայրը զգայացունց ու խորհրդաւոր տեսարանով: ծաղկաւէտ մարմանդի մը մէջէն հեռուն կը բարձրանային զոյգ մը սպիտակ կաթողիկէներ, և անոնց մէջտեղէն վեր կ'ամրաւորար թաշապատ պատանդանով Մխիթարայ վեհ կիսանդրին: որմերուն վրայ կախուած էին Մխիթարայ յաջորդ Արքաներու և Մխիթարեան եպիսկոպոսաներու պատկերները: ամէն ինչ մեծութիւն կը քարոզէր: Հանդիսականները Մխարանութեան հայերն էին բացի մէկ երկու մտերիմ բարեկամներէ: վանքի 30ի չափ սաններուն հետ կային նաև Մ. Ռափայէլեան: վարժարանէն չորս ջութակահար Միքայէլ Միմտեան, Կարօ Սարեան, Բիւզանդ Գասպարեան, Թարութիւն Աճէմեան, և դաշնակահար վարդգէս Երէցեան, որոնց ընկերութեամբ աշակերտաց փոքր դասերը նուագեցին, ա. «Երանուհի Մաւրիամ» զգայուն մեղեդին առ Ս. Կոյսն՝ Մխիթ. Արքանօր յօրինած բառերով և եղանակով: Բ. «Առ Մխիթար» նոր բառեր՝ ազուցած Մխիթ. Արքանօրէն յօրինուած երգի մը առ Ս. Անտոն «Զրեզ Ս. Հայր Անտոնիէ»: Իսկ մեծ դասը նուագեց երոպական երկու ընտիր կտորներ Ռուսիկի «Մովսէս»-էն՝ «Աղօթք» և Մարչէլլոյի «Իթ» գեղեցիկ սազմուր եր-

կու ծայնով՝ մեծ յաջողութեամբ գովեստի ծափեր խելով:

Հ. Դևոնդ Տայեան Վ. Երբ իբրև վերահասցու Նորընծայից և յօրեկեան հանդիսին կարգադիր, համառօտ բայց եռանդնալից ներողեան մը կարողաց զբարար, աւելցնելով ինչ ինչ պատմական տեղեկութիւններ Նորընծայարանի մասին:

Փոքր դասերու աշակերտները երկու ոտաւ նաւորներ արտասանեցին. մին աշխարհաբար խորհրդաւոր պատկերներով և զգայուն շեշտով «Պատշտութիւն Խորան»-ը: միւսը զբարար, Նորընծայարանին հետ կցելով Մխիթարայ ծննդեան 250 ամեակը:

Իսկ մեծագոյն դասէն մին՝ անցեալ յուշերու քաղցը և զմայլելի տպաւորութեան տակ Նորընծայարանն ու անմեղ օրերու գեղը պարզեց: Հուսկ վանքի աշակերտութեան ամենէն փոքրիկը զգայուն, վստահ և համակրելի շեշտով մը որդիական իրգներ արտայայտեց Նորընծայարանի պաշտպանին՝ Ս. Կուսին և Մխիթար Արքանօր: Երգ, ճառ, արտասանութիւն սիրով և հետաքրքրութեամբ լսուեցան, ամէնքն ալ խանդավառ ծափերու արժանանալով:

Աթոռակալ Վ. Ի արտարուի խօսքերը՝ բերկրութեան և խրախոյսի՝ վերջ դրին ակումբին, և հանդիսականները վեր հրաւիրուեցան Մխիթար Արքանօր դասարանը: Լուռ, խոնուն՝ ամէն ոք գրեթէ յուզումով դիտեց այդ պաշտելի վայրն ալ, Մխիթարայ պատկերը, աթոռն ու սեղանը ուսկից կարծես յաւերժական բարբառով կրօնքի ու գիտութեան, Եկեղեցւոյ և Ազգին սէրը կը քարոզէ: և իրեն հետ իր գիտուն, սրբասէր ու մեծ որդիները, որոնց պատկերները այդ օր հոն որմերը կը զարդարէին, քանի որ իրենց ալ տուն էր:

Ասկից ալ դեռ յառաջ, ներքապագայ մեծ սննեակ մը, Նորընծայարանի հանդիսաբանը, ուր մտնողին աչքն ու սիրտը կը

1. Նորընծայարանի յօրեկեանին շուրջ «Բազմավայր» ընթերցողները արդէն «Մայիս»-ի մէջ տեսան ընդարձակ յօդուած մը: որով աւելորդ կը համարենք պատմական մանրամասնութիւններու իշխել:

2. և 3. Աճ. էջ 145-146:

գրաւէր իսկոյն Մատարն Սատուածաւոր պատկերը մեծադիր լուսանկար, ու անոր ստորև ու կողմնակի Մխիթարայ այս սրբապալայրին մէջ մեծցած ու կրթուած, 1701-1926, թուով գրեթէ 1000 սանհարու ցուցակը, խոշոր բարտէսներու վրայ դասաւորուած ժամանակագրական կարգով տարիքի ծննդապալայրի և ուրիշ ջատ մը կարևոր մանրամասնութիւններով:

Չորս որմերուն երկայնութեամբ յատկապէս պատրաստուած առիշեղ սեղաններու վրայ ցուցադրուած էին հին ու նոր սանհարու մտքի և ձեռքի ընտրել աշխատութիւններ, արդարև գեղեցիկ մտածութիւն որ մինչև իսկ յուզում պատճառեց երիցագոյն հարց, երբ գողգոթուն մասներով շօշափեցին ու դիտեցին իրենց աշխատութիւնները, ու պահ մը կարծես նորոգուեցաւ երիտասարդութեան և անմեղութեան հասակը: Ի յիշատակ սրտագրաւ յորեկնական հանդիսին բոլոր հանդիսականները ինչպէս նաև աշակերտները՝ հրաւիրուեցան արձանագրելու իրենց անունները ոսկեմատենանի մը մէջ:

Ընթրիքէն վերջ տեղի ունեցաւ վենետկեան գեղեցիկ լուսավառութիւն մը, կրկին փառապանքներ Մխիթարայ պատկերներուն, արձաններուն՝ Սրահներ, դասարաններ գունագեղ լապտերներու լուսով ու զոդուած կը ցոլային սիրանուագ երգերու թրթռումներուն հետ: Ժամերը կը սահէին, լապտերներու լոյսը կը նուաղէր... ու հանդիսաւոր օրը կը մեծնէր, կնքելով երկու դարեր սրբազան յիշատակով մը որ արշալոյսը պիտի բանար նոր դարուն:

Գ. ԼՈՒՍԱՆՈՐՈԳՅ ՄԻԹԱՐԱՆԸ ԾՆՆՆԵՐԱՆ 250ԱՄԵԱԿԸ:

* Թէպէտ ամբողջական դարաշրջան մը չէ որ կը բոլորի, սակայն քանի որ մեծի մը յիշատակն է, մեզ համար միշտ մեծ ու պաշտելի է ան. յիշատակ մը որ Մեծին Մխիթարայ տունէն գատ՝ ամբողջ ազգին է, որովհետև հայ միտքն ու գրականութիւնն է որ կը վերածննդ անոր հետ և անոր ձեռքով:

Մեծագոյն փառքեր ծրագրելով այժմէն անոր 300 ամեակին, առ այժմ համեստ՝ սակայն երախտապարտ զգացումով մ'է որ կը մտենանք մեր ամսահ Հօր ծնունդն ողջունել, ծնունդ լոյսի և բերկրութեան, նկատելով մի և նոյն միջոց՝ թէ ցիրուցան, վտանգուած ազգութիւն մը՝ ո՞րքան կը կարօտի մեծերու յիշատակին, անոնց և մանաւանդ Մխիթարայ պէս անզուգական մեծի մը օրինակէն ու սրտէն ծծելու կրօնքի և ազգութեան ուժը:

Արդ, ըլլայ սրբազան պաշտամունքի մը խորին զգացումը առ Մխիթար, ըլլայ ցուցադրութիւն անոր պատկերին՝ կրօնքի և ազգութեան զգացումներ արթնցնելու նպատակով՝ գիտենք որ սուրբ են և նուիրական երկուքն ալ:

Ապրիլ 27ի յիշատակը լոկ զրական կամ բանախօսական էր ինչպէս նաև ներքին ու ընտանեկան, այս անգամ սակայն հասնողը ծրագրուեցաւ տեղւոյս եկեղեցական և պետական անձերու և յատկապէս ազգային գաղութին համար՝ Նուագախառն ակումբի մը կերպարանքին տակ:

Յունիս 9իւ, երեկոյեան ժամը 5իւ, Մ. Ռաֆ. վարժարանի փառաշուք դահլը՝ ճին մէջ կը հասաւորէր հրաւիրելոց բազմութիւն մը. դահլի մուտքին՝ ամէն հանդիմական խորին յարգանքով կը խոնարհէր մեծին Մխիթարայ կիսանդրիին որ պըճնուած էր զրառանգներով ու վարդերով և անոր պատուանդան կը կազմէին նոյնպէս վարդեր ու երփներփեան ծաղիկներ շուայլօրէն թափուած... խորհրդանշի իր որդուց անպայման սիրոյն և յարգանքին:

Մեծին Մխիթարայ յիշատակը կը պատուէր անոր հոգւոյն մեծագոյն զմայնող մը, վենետկոյ Միր. Պատրիարքը, որուն քով նշմարեցինք ծովակալի, նահանգապետի և քաղաքապետի ներկայացուցիչները, ինչպէս ցամաքային զօրաց հրամանաւորը, Ֆրանսական դեսպանը, Ֆրանսական գաղութի նախագահը, թերթերու խմբագիրներ, ուսուցիչներ, բարեկամներ, ծանօթներ, ամբողջ ազգային գաղութը, Միաբանութեան բոլոր հայերը հետունք:

ու մօտէն վանքի աշակերտաց խաւ-
բերը:

Մ. Ռափ. վարժարանի տեսչութիւնը
իր Թանկագին օժանդակութիւնը կը բերէր
Հանդիսին կարգադրութեան ինչպէս ներ-
կայ եռսնդուն սաները, և նախկին ջրջա-
նաւարտ աշակերտներ Գէորգ Պապայեան,
Թովհանէս Պոտուրեան և Արտաշէս Նա-
հապետեան խմբերգի և զործիական մաս-
նակցութեամբ՝ նուազահանդէսին մէջ:

Հանդէսը բացաւ «Առ Մխիթար» երգը
(inno) յորինուած Ուսուցչապետ Ա. Փոն-
ցիլաբուայէ որ միանգամայն վարիչն էր
երգահանդէսին. ներդաշնակ ու զգայուն
խմբերգ աշակերտաց՝ նուազախումբի ըն-
կերակցութեամբ:

Յաջորդեց Տոնիծէթթիի համերգ մը
«La figlia del reggimento» (բանակին
ղուստը) զոր յաջորդութեամբ հնչեցուց
նուազախումբը:

Երրորդ տեղը կը զբաւէր Մխիթար
Արքայօրէն յորինուած տիրանոյշ մեղեդին
առ Ս. Կոյան «Երանուհի Մարիամ»,
որուն եղանակն ու բառերը Մխիթարայ
հոգւոյն սիրային թոյիշ կ'ակնարկէին գո-
րովանքի և նուազման շեշտով. իր փո-
քրկութեան մէջ նուազախումբի գոհարն
էր որ սրտերն յուզեց երբ Հ. Ղևոնդ
Տայեան Վ.ի թրթռուն ձայնին կ'ընկե-
րէին ջութակներն ու տաւիղը՝ իր մոգիչ
գանգիւններով:

Բնական է ազգայիններէն աւելի՝ մեծ
եղաւ օտարներուն զարմանքն և հետա-
քրքրութիւնը՝ իրենց լոկ Սուրբ, գիտա-
կան ու հանճարեղ ճանչցած Մխիթարը
այժմ երաժշտի չքնաղ ձիւրք մ'ալ կը
նշուէր:

Ատոր յաջորդեց դարձեալ Մխիթարայ
հոգիէն ու ջունչէն ծնած սիրախառն երգ
մը «Գովեալ դասուցն» նոյնպէս ազնիւ
ու զգայուն մեղեդի առ Ս. Կոյան:

Երբ խանդավառ ծափերով պսակուե-
ցան մասնաւորապէս Մխիթարայ երկու
գեղեցիկ կտորները, բեմ ելաւ Հ. Գա-
րիէլ Վ. Նահապետեան և հանդիսական-
ներուն ծանօթ՝ իտալերէն լեզուով բա-

նախօսեց Մխիթարայ և անոր գործին
շուրջ, պատկերացնելով մեծ Սեբաստաց-
ւոյն ծանօթ կրօնական և գիտական բարձր
ու լուսագեղ հոգին իր աննման, վշտալից,
փոթորկուած կեանքի մթութեան մէջէն
արեգնափայլ ճառագայթով. գծեց նըր-
բորէն Նախարհաւորութեան ծրագիրը հայուն
հանդէպ, Մխիթարայ դաստակերտին հաս-
տատութեան շուրջ, երախտագիտութեան
անկեղծ թոյիշներով առ եկեղեցական և
պետական իշխանութիւնները՝ որունը Մխի-
թարայ անձին ու գործին մեծապէս ա-
տարած են և կը շարունակեն: Հոս ալ
բուն ծափեր տեղացին ծանազան հաս-
ցէներու ինչպէս բեմասացին՝ երբ վերջ
դրաւ իր եռանդուն խօսքերուն:

Համառօտ դադարէ մը վերջ նուազա-
խումբը ձեռք կը զարնէր իր ծրագրի եր-
կրորդ մասը կատարելու:

Նախ Ռանծաթոյի աշխոյժ, վառվռուն
երգ մը, ապա դարձեալ մեծին Մխիթա-
րայ գործ՝ երգ առ Ս. Անտոն «Ջրեղ Ս.
Հայր Անտոնիէ»։ այս անգամ Մ. Ռ-
վարժարանի փոքրիկներու խումբն էր որ
մանկական անոյշ ձայնով երգեց ջութակ-
ներու և տաւղի ընկերակցութեամբ. այդ
երգին մէջ՝ պաղատախառն շեշտով կը
զգացուէր Մխիթարայ հոգւոյն վշտին րո-
վանդակ մեծութիւնը և սրտեռանդն ա-
պաւնութիւնը առ իր կրօնքի մեծ պաշտ-
պանը:

Պեւիինիի «Նորմա»ի ներածութիւնը մե-
ծապէս խանդավառեց հանդիսականները:
Մ. Ռ-վարժարանի մեծ սաներուն խումբը,
ընկերակցութեամբ մեծակոկորդ Թաւ ձայ-
նի մը, նուազախումբին հետ յաղթակա-
նօրէն երգեց սքանչելի կտորը, իրեն
շեշտին, ձայնին, զգացունքներուն մէջ ար-
տայայտելով ազնիւ, վսեմ և անմահ ցեղի
մը արիւնն ու հոգին:

Տաղանդաւոր հայ մը հուսկ իր հան-
ճարի գոհարը կը նուիրէր մեծ Մխիթա-
րայ անմահ յիշատակին, Սինանեան՝ իր
«Marche Méchitar»ով, որուն մէջ
արեւելեան զգայուն շեշտ ու վեհ զգացում
մը կար:

Ու այսպէս կը լրանար ամբողջ ծրագիրը:

Բանախօսութիւն, երգ կը լռէին ծագահարութեանց և խանդավառ ցոյցերու մէջ երբ՝ յանակնկալ բազմութեան՝ բեմ բարձրացաւ ծիրանազգեսաց պատկառելի Պատրիարքը Պետրոս Լաֆնդէն, և ոսկեւ բերաննան ընտանի, սրտագրաւ և հայրական ջնջողով մը յօրինեց Մխիթարայ ներբորգեան մը, զոր հոս կը դնենք բառ առ բառ թարգմանած իր գեղեցիկ լեզուն:

«Մեծապէս լաւ գործ մը կ'ընէք, սփ չափք, երբ վառ կը պահէք ձեր հիմնադիր Երանայնորհ Մխիթարայ յիշատակը, որուն մասին համարտապէս կընանք կրկնել այն գովեստը զոր աստուածային վարդապետը Յովհ. Մկրտչին տուաւ. Նա էր ճրագն որ լուցեալ էր և ծագէր: Վառուեցէք սիրով անոր պէս. փայլեցէք անոր նման օրինակելի լոյսով և այնպէս հասած պիտի ըլլաք ձեր կոչման նպատակին:

Բնառ ուշ դրեր էք՝ երբեմն մարդոց կու տանք անուններ որ նախախնամօրէն կը նշանակեն թէ ինչ՝ պիտի ըլլայ իրենց կեանքի գործունէութիւնը:

Ձեր հիմնադիրը իր մկրտութեան՝ Մանուկ կոչուեցաւ, իսկ իր սարկաւազութեան՝ Մխիթար: Եւ արդարեւ անմեղ մանկան և հզօր մխիթարչի կեանք մ'ըզաւ անորը:

Երբ մանկան կեանք կ'ընեմ, չեմ ուզեր անմիտ և անխորհուրդ կեանքի մ'ակնարկել, այլ այն կեանքին՝ որուն համար Քս. ըսաւ. Եթէ ոչ ինիշխիք իբրեւ գմանկտի ոչ մտանիցք յարգատեմիւն երկնից: Ի չարեաց տղայացարուք, կը գրէր Ս. Պօղոս իր առ Եղբիթ. Ա. Թղթին մէջ, և մտօք կատարեալք յինիշխիք: Ասպիտի էր Եր. Մխիթար: Եւ ստուգիւ մանուկները հաւրեստութիւն և պատու չին փրտներ: Մխիթար կը գրուէր պերճութենէ և հարստութենէ, զոհաւնալով միայն ուխտով պահել իր շուշանի ամբօթութիւնը, կատարեալ հնազանդութիւնը և իր բարձր աղքատութիւնը:

Մանուկները սիրով և տեսակ մը հպարտութեամբ կը կենան իրենց հօր բազուկներուն մէջ և գորովալից վստահութեամբ կը հանգչին իրենց մօր ծոցը և Եր. Մխիթար, ինչպէս յայտնապէս կարելի է տեսնել իր վաղքին և յատկապէս իր «կտակին» մէջ, հպարտ կը զգար ինքզինքը Սրբազան Քահանայապետի բազուկներուն և ի

ծոց Ս. Եկեղեցւոյ՝ որուն շերմեանդ որդի կը յայտարարէր ինքզինք:

Մանուկներն ընդհանրապէս դիրաւ գութի և օգնութեան կը շարժին դէպի Թշուառները. Եր. Մխիթար իր սրտին մէջ արմատացուցած էր գութը, որուն պատճառաւ աւելն ինչ կ'ըլլար աւննուն համար մինչև ժամատախտէ վարակուած ներուն ծառայելով և անխնայ դիակները թաղելով և ինքզինքը զրկելով իրեն սահմանուած կեանքապահէն՝ խեղճ սովեակներու օգնելու համար: Այս ամենապարզ ակնարկներէն արդէն կը տեսնուի թէ Եր. Մխիթար Աբբա հօր դէմքը կ'երփներանգուէ մխիթարչի սիրարկու գոյններով:

Եւ ստուգիւ նա՝ զոր Նախախնամութիւն յայտնեց իր Հայաստանին հաւաքքի, ապահովութեան, քաղաքաբնութեան, գրականութեան ամենէն ողբալի շրջանին՝ իր խորաթափանց աշխարհով չափեց աւերածին մեծութիւնը, և օգնութեան դիմեց Ս. Պօղոսի օրինակին նման, այնպէս որ իր առ կաթողիկէ հաւաքքն ունեցած սէրը սեռուղ եղաւ իր ազգասիրութեան:

Եւ ահա Երանայնորհ որ կը շրջի երկիրներ իրենցման հանգրուան մը փնտռուի. Երբ Նախախնամօրէն հերբնկալալի Պերճապայծառի (Վենետիկ դշոյի) իշխանութեան մէջ. Ս. Ղազարէն պիտի ճառազայթէ մխիթարութեանց հզօր հոտանք մը իր արտասուելի ազգին մէջ՝ առաւ քննութիւններու հաստատութեամբ իրեն ընկերակից առնելով վաստակաւոր անձեր, հայկական գրականութեան վերածնունդով, սեփական տպարանով, որուն տպագրութիւնները պիտի սփռուին հոն ուր չի հասնիր առաքեալը, և Աստուծոյ օրհնութեամբ փրկարար պտուղներ պիտի հասցնեն Եր. Մխիթար Աստուծայնչ հրաշալի տպագրութիւնը կ'ընէ, կը գրէ արձակ և ստանաւոր, կը լսեցնէ իր երաժշտական ծիրքը, կը պատրաստէ հայ գր. և աշխ. լեզուի քերականութիւն, կը աքնի անխոնջ հայ լեզուի բառարանով, կը գրէ ընտիր հոգեւոր երկեր, կը հիմնէ Ս. Ղազարի եկեղեցին և կը նորոգէ բաւական ընդարձակելով այդ վանքը որ կը դառնայ իբրեւ սիրտ այդ ցիրուցան ազգին, ուր կը պահուի իրեն սրբազան հուրը, ուր հանապազօրօք Եկեղեցւոյ և Ազգին համար կը մատուցուի հանդիսապէս Գոհութեան և օրհնութեանց զոհք առ Աստուած, ապաստանարան՝ բաց թշուառ տարագիրներու կամ անոնց որ հայրենի բնակավայրէն հալածուած են, որոնք միշտ Եր. Հօր եղբայրական գթով կը հիւրընկալուին:

Ինչն զարմանք թէ վննեմեան ազնուականութեան ամենամեծ դէմքերն իսկ մեծ պատիւներ շայլէին Աստուծոյ ծառային. Բն զարմանք թէ նա փայտայուած ըլլայ իր ժամանակի Սրբազան փանայտագետներէն իսկ՝ որոք զինքը մենաշնորհներով ճոխացուցին. Դա իր մահէն վերջն ալ չզաղորեցաւ միթիթարէն ըլլալէն, վընտացեալ հայերուն որոնք չարաբուած, հալածուած, վննուած իբրեւ զազաններ՝ Ս. Ղազարէն ազդու սփոփանք ունեցան. Եւ հոս Միթիթարեան բունին վրայ պատուաստուած այս Մ. Ռաֆայելեան վարժարանի ճիւղը, ոսկինք ելան կազմուած, ունենալով ուսման ամենագոտակար վկայականներ այնքան բազմաթիւ սերելի պատանիներ, որ այսօր պատուաւոր դիրք մ'ունին և պատիւ կը բերեն իրենց հայրենիքին որուն միանգամայն յոյսերը կը կազմեն. Դարձեալ, վերջին ժամանակներուս, երբ փոթորիկը փըրթաւ տասնորդուած Հայաստանի վրայ և կործանեց ու ցրուեց բնակիչները. երբ Հայաստան սրտաճմրիկ աղաղակներ արձակեց (որոնք դըժբախտաբար անլսելի Ձիաքցին) երբ սեռաւ թէ երկիրն անգամ կը դողայ, քանի որ աշխարհի ստանային անտարբերութեան ատեն, հարիւրաւոր մանուկներ թաղուած էին հողին տակ, որոնցմէ ոմանց սիրտը դեռ կը բաբախէր, ճւր գտնուեցաւ միթիթարութիւնը բայց հոն ուր կենդանի է Եր. Միթիթարայ հոգին. Ո՛հ, որքան մանուկներ ընդունեցաք ձեր գիրկը. լայնեցիք ձեր բոլոր բարեգործական տունէն և որբանոցները և այնպէս այնքան արցունքներ սրբեցիք. Օրհնեալ ըլլաք ատոնց համար. Բայց նախ օրհնեալ ըլլայ ձեր Հիմնադիրն և Հայրը, որ ժրկչին աղբիւրներէն հանելով ձեզ հաղորդեց այն փրկարար ջուրը, որ կենաց ջուր կը կոչուի. Եր. Միթիթար, ստուգապէս լապտերն էր որ ծագէր. Դարուսականցէք միշտ առանց աջ կամ ձախ շեղելու:

Եւ եւ կը մաղթեմ որ անոր լոյսով որ իր ժամանակակիցներէն կ'ուռնեցաւ «Լուսատու ալ, ընգալ» ձեր ազգը՝ վերստին միանալով ի միութիւն մտածութեան և սիրոյ առաջնորդութեան տակ անոր գոր կ'ընթեռնուն Աստուծոյ գրքին մէջ՝ յառաջէ երազընթաց համբարաշխ ներդաշնակութեամբ՝ ինչպէս քաջ երաժիշտները որ քիչ մ'առաջ՝ ճարտար ուսուցչին առաջնորդութեամբ նուագեցին «Միթիթար»՝ քայլերգը

խանդավառութեամբ՝ խորհրդանիշ և մաղթանք ձեր յառաջագիմութեան:

Թող ձեր երկնքի հաստատութեան վրայ փայլի զուարթալոյս աստղը Միթիթար իբրեւ Երանելի և Սուրբ »:

Վսեմափայլ Միթիթարութիւն հոգեբուխ խօսքերը մեծ հետաքրքրութեամբ ունկնդրուեցան ամբողջ հանդիսականներէն. աւնոր համառօտ՝ բայց եռանդուն ներբողանք կրկին անգամ նորոգեց ամենուն սրտին և մտքին մէջ՝ Միթիթարայ հոգւոյն վեհ և անզուգական տիպարը, իր առաքինութիւնները, իրեն կատարած փրկարար գործը և կանգնած Միաբանութիւնը:

Երբ Վսեմ. Պատրիարքը այն գերագոյն մաղթանքովն ու զրուատիքովը իր խօսքերը կ'աւարտէր, բուն և երկայն ծափերու տարափ մը կը տեղար, արտաբայտելով խորին համակրանք և անկեղծ սէր առ այդ եկեղեցականի տիպար բարի հովիւը, ու անոր հետ միանգամայն խանդավառ ցոյց մը և հաստատութիւն Միթիթարայ տրուած արժանաւոր մեծագին գովեստին:

Որդարեւ թանկագին, անթառամ և արժանաւոր պատկ մ'էր Միթիթարայ հակտին ազնուասիրտ Միթ. Պատրիարքին խօսքը. գիտակցօրէն և խորին համուզով ընծայուած, գովեստ որ նաև խրախոյս և քաջալիք կը կազմէր Միթիթարայ բոլոր զաւակներուն:

Ամբողջ հանդէսը 2 ժամ տևեց. հրաւիրեաններուն համեստ հիւրասիրութիւն մ'ըրին Միթիթարայ Որդիքը, ու ամէնքը զո՛հ և ուրախ մեկնեցան՝ տանելով իրենց հետ մեծին Միթիթարայ յիշատակը օրինակ ու քաջալիք սրբազան սիրոյ մը՝ առ կրօնքն և առ Ազգը:

Հ. ԵՂԻԱ ՓԵՏԻՆԵԱՆ

